Э. Г. Минасян, Армянки в годы Второй мировой и Великой отечественной войны (1939-1945), Монография, Ростов-на-Дону – Таганрог, Из.-во Южного федерального университета, 2021, 284 стр.

Դոնի Ռոստովում հարավային դաշնային համալսարանի հրատարակչությունը ռուսալեզու ընթերցողի դատին է հանձնել պրոֆեսոր Էդիկ Մինասյանի հեղինակած և պ. գ. թ., դոցենտ Յու. Սայադովի խմբագրած՝ «Հայուհիների մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական մեծ պատերազմին» մենագրությունը: Վաստակաշատ պատմաբանի այս մեծարժեք աշխատության մեջ ընդգծվում են հայուհիների կատարած սխրանքներն ու հերոսական դրվագները ոչ միայն ռազմաճակատում՝ մարտական գործողությունների ժամանակ, այլև՝ աշխատանքային սխրանքները թիկունքում:

Մենագրության մեջ պատմաքննական վերլուծության են ենթարկվել հերոս հայուհիների կյանքին զուգորդված բոլոր կարևոր պատմական դեպքերն ու իրադարձությունները, այդ թվում՝ ավելի լայն և ընդգրկուն հիմնահարցեր, ինչպիսիք են՝ հայ ժողովրդի ներդրումը Երկրորդ աշխարհամարտի և Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի գործում և այլն: Քրտնաջան աշխատանքի արդյունքում, բազմաթիվ արխիվային նյութերի, հուշագրությունների և պատմական գրականության հիման վրա հեղինակին հաջողվել է ստեղծել կուռ կառուցվածք և հարուստ բովանդակություն ունեցող ուշագրավ մի աշխատություն, որտեղ առաջին անգամ ընթերցողի դատին է հանձնվում Երկրորդ աշխարհամարտում հայուհիների կատարած սխրանքները, հատկապես՝ պարտիզանական և դիմադրական շարժման շարքերում, ԽՍՀՄ դաշնակիցներ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի բանակներում: 284 մեքենագիր էջեր ընդգրկող սույն մենագրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից և սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից: Ներածությունում ներկայացված է ուսումնասիրության կարևորությունը, հատկապես՝ մեր օրերում հայրենասեր սերունդ դաստիարակելու հարցում, երկրի պաշտպանությունը, անվտանգությունը և ամբողջականությունը պահպանելու խնդիրներում: Վերլուծված է օգտագործված գրականությունը և հիմնավորված է աշխատության տեղն ու դերը հայոց պատմագրության մեջ:

Առաջին գլխում, որը վերնագրված է «Հայուհիների ներդրումը Երկրորդ աշխարհամարտի հաղթանակի գործում», ներկայացված է հայ ժողովրդի մասնակցությունն ու ներդրումը Երկրորդ աշխարհամարտի հաղթանակի գործում: Այստեղ, համապատասխան փաստերի վերլուծությամբ, հեղինակը ներկայացրել է հայ ժողովրդի կատարած վիթխարի ներդրումը և իր մասնակցության ու թվաքանակի համեմատ այն առաջատար դիրքերն ու տեղը, որը նա գբաղեցրել է ԽՍՀՄ հանրապետությունների և պատերազմին մասնակից ԽՍՀՄ բնակչության մեջ, ոչ միայն հերոսների թվաքանակով, այլև՝ գեներալների, մարշալների, հրամանատարական կազմի այլ ցուցանիշներով: Ներկայացնելով մարտական գործողություններին մասնակից հայուհիների սխրանքներն ու հերոսությունը՝ հեղինակը ընդգծում է. «Հայ ժողովրդի արիասիրտ դուստրերն անձնազոհության անկրկնելի օրինակներ են ցույց տվել Մոսկվայի, Լենինգրադի, Օդեսայի, Սևաստոպոլի, Ստալինգրադի, Կուրսկի, Կովկասի, Խորհրդային Միության և Եվրոպայի այլ քաղաքների և բնակավայրերի ազատագրման համար մղված մարտերում» (տե՛ս սույն մենագրությունը, էջ 48, 49):

«Իրենց հերոս եղբայրներից, ամուսիններից, հայրերից ու որդիներից ետ չեն մնացել նաև կանայք: Նրանք ոչ միայն թիկունքում՝ արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարական կազմակերպություններում, տրանսպորտում, կոլտնտեսություններում, լուսավորության, առողջապահության, արվեստի, մշակույթի գրեթե բոլոր բնագավառներում փոխարինել են տղամարդկանց, այլև համալրել են բանակի շարքերը՝ ի-

րենց մեծ լուման ներդնելով հաղթանակի գործում, - գրում է հեղինակը, ապա ավելացնում, որ տղամարդկանց հավասար նրանք ծառայության են անցել մարտական բոլոր դժվարությունները հաղթահարելով, նրանց հետ միասին հասել են մինչև վերջնական հաղթանակ, մինչև Բեռլին» (տե՛ս սույն մենագրությունը, էջ 53): Այստեղ հեղինակը մեջ է բերում գեներալ Չույկովի խոսքերը. «Երբեք ոչ մի պատերազմում կանայք այնպիսի դեր չեն խաղացել, ինչպես 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում»:

Հայ կանայք և աղջիկները համալրել են խորհրդային և ԽՍՀՄ դաշնակիցների բանակների, ռազմաօդային, ռազմածովային նավատորմերի և հակաօդային պաշտպանության միավորումների շարքերը: Խորհրդային և արտասահմանյան երկրների հազարավոր կանայք, այդ թվում՝ հայուհիներ, բանվորուհիներ, կոլտնտեսուհիներ, ուսանողուհիներ, մտավորականության ներկայացուցիչներ կամավոր մեկնել են ռազմաճակատ և մարտնչել ֆաշիստական զավթիչների դեմ՝ որպես տանկիստներ, կապավորներ, հրետանավորներ, օդաչուներ, բժշկասանիտարական աշխատողներ և այլն, - գրում է հեղինակը:

«Պարտիզանական և դիմադրական շարժման շարքերում ու ԽՍՀՄ դաշնակիցների բանակներում մարտնչած հայուհիները» գլխում հանգամանորեն ներկայացվել ու վերլուծվել է ոչ միայն թշնամու թիկունքում մարտնչած պարտիզան հայուհիների սխրանքներն ու կատարած հերոսական գործունեությունը (Մայա Փահլևանյան, Արփիար և Լուիզա Ասլանյաններ, Մելինե Մանուշյան, Հերմինե Ռազգրատյան (Սաշկա), Վարդուշ Սուքիասյան (Սուքիասիչ) և այլոք), այլև ԽՍՀՄ դաշնակից երկրների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում մարտնչած հայուհիների՝ Մոնիկ Աղալարյանի, Մերի Աշճյանի, Ագնես Միլդոնյանի, Էլեն Կումջյանի, Մերի Հակոբյանի, Կլարա Մուրադյանի և այլոց ներդրումը Երկրորդ աշխարհամարտի հաղթանակի գործում:

Աշխատության հեղինակը հատուկ գլուխ է նվիրել հայ աշխատավորուհիների ու մտավորական կանանց գործունեությանը թիկունքում Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Այստեղ բազմաթիվ փաստերի վերլուծությամբ ցույց է տրվում, թե ինչպես ռազմաճակատ մեկնած տղամարդկանց փոխարեն հայ կանայք ու աղջիկները թիկունքում արդյունաբերական ձեռնարկություններում, տրանսպորտում, կոլտնտեսային դաշտերում, լուսավորության, առողջապահության ու մշակույթի բնագավառներում կատարած աշխատանքային սխրանքներով իրենց մեծ ներդրումն ունեցան հաղթանակի գործում:

Ներածության մեջ հեղինակը տալիս է գրականության տեսությունը և միաժամանակ բացատրում իր կատարած գիտական մեծածավալ և ամբողջական աշխատանքի կարևորությունը: Վերջաբանում ընդհանրացվում են աշխատանքի արդյունքները և կատարվում համապատասխան եզրակացություններ, իսկ վերջում ներկայացնում է սկզբնաղբյուրների և գրականության ցանկը, որը խիստ օգտակար է հետագա ուսումնասիրողների համար:

Այսպիսով՝ կատարվել է բավականին մեծ ծավալի աշխատանք, որն ունի գիտական նորույթ: Հայ պատմագրության մեջ առաջին անգամ ամբողջությամբ ներկայացվում է հայուհիների գործունեությունը ոչ միայն Հայրենական մեծ պատերազմի, այլև՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին և ընդգրկում է բազմաթիվ ոլորտներ՝ սկսած հայուհիների մարտական գործողություններից, ավարտած աշխատանքային սխրանքներով:

Կատարվել է գիտական նորույթ պարունակող աշխատանք, որն արժանի է հրատարակման:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կլիմենտ Հարությունյան